ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Արմավիրի մարզի Լենուղու Ձիվանու անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Ֆիզկուլտուրայի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1/ դիմում (Ձեւ 1)

2/ մեկ լուսանկար 3x4 չափի

3/ բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

4/ անձը հաստատող փաստաթուղթ

5/«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

6/ ինքնակենսագրություն (Ձեւ 5),

7/ այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

8 /ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

9/ հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

10/ որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ապրիլի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա ապրիլի 22-ին՝ ժամը 15:00 -ին, ՀՀ Արմավիրի մարզի Լենուղու Ձիվանու անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Արմավիրի մարզ, գ.Լենուղի , 7 – րդ փողոց , 38 շենք:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 66-69-53 հեռախոսահամարով: